

թեանցն և ազգասէր խոհականութեանցն զգալի տեղեկագրութեամբ հրատարակութեան ասպարէզն իջանելով, քանզի մինչ ցարդ հրատարակութեամբ համազգեաց տրտմառիթ կենսազրաւ սղութեան աշուելի պատկերն կընկարազրեն, որոյ գործերէն մի է ներկայ կարեկցական վիճակ Մարադայու ազգայնոցն մերօց, որոց տիսուր հանդիսանու է Դաւրիժեցի ոմն տեղւոյս երեկի Հայ վաճառականաց գործակատար Մարտիրոս Անդրէասեանն, որ տեսանելով թէ մին քանի անձնուք իրեանց կարեկցելի ընտանեօքն հանդեռ՝ յակամայից և ի սովու բռնադատեալ ի կրօնափոխութիւն կղիմեն այն է ի մահմետականութիւն, շարժեալ իւր եղբայրսիրութենէ և ընթեռանդ ազգասիրութենէ նոցա կրօնափոխութեանն արգելք կինի նոցա առժամանակեայ ուտելիսաց պիտոյքն շնորհելով՝ մասաւանդ շատ մուշարական խօսքերով նոցա վիշտն սփոփելով և Դաւրիժայ Գերապատիւ Առաջնորդի ձեռամբ զրամաւ որ օժանդակութիւն խոստանալով. ուստի անմիջապէս այս ցաւալի դէպքն զրաւորապէս կտեղեկագրէ տեառն իւրում աստ, որ ազգասիրապէս մեծ ցաւ զգալով և ազգային կորստեան գուռն բաց տեսանելով՝ փութապէս կղիմէ, կներկայանայ Գեր. Առաջնորդին, այս ցաւալի դէպքերն նորա որդիասէր խնամոցն յանձնելով, իսկ նորին Սըրարաջնորդիւնն նոյն թշուառացն օգնութեան ձեռք կարկառելց նպատակաւ տեղւոյս աղքատաց հոգատարութեան մասնաժողովն կըրաւիրէ յԱռաջնորդարանն, ուր երկար խորհելն և քննելն զինի՝ 30 պարսից թուման կյանձնուի անդամոյ նոյն մասնաժողովոյ Պարոն Ծըրահամու Զալապեանց փութապէս հրամանազրել գործակատարի իւրում վերջիշեալ Մարտիրոսի Անդրէասեան զիտութեամբ Առաջն Եաւար Էնակօլոփեամի<sup>(\*)</sup>) մասնազրել նոյն սովալուկ թշուառացն մինչև յառանձին տօրինութիւն

Յետոյ տեղւոյս Գեր. Առաջնորդն մին յանդիմանական կոնդակ կարձակէ տեղւոյն անրժան քահանային որպէս զի խայտառակուի նորա այս-

(\*) Առ ազգաւ չայ հազարապէս է Պարոսց, որոյ գտանիլ Քեպողական է իւր զննուորաց գրիցն համաձայն

պիսի տխմարական դանցառութիւնն վերջիշելոց ձեռամբ հասարակութեան առջև, վասն զի իւր իսկ չոգեոր և սեպուհ պարտականութիւնն իրը վարձկան վարելով, զանց կառնէ տմարդին զայսպիսի իմն սրտաշարժ անցքն տեղեկագրել Գերապատիւ Առաջնորդին:

Միթէ ազգասէր Առաջնորդն բաւական պիտի համարէր վերջիշեալ գուղնաքեայ գումարն Մարադայարանակ թշուառաց համար՝ որք տարաժամ կտանջուեին անգութ սովէն, ոչ բնաւ. վասն որոյ և յարմար ժամանակ գոնելով՝ բերանացի խընդրան զի մէ առ Անդրիական Հիւպատոսոն տեղւոյս Լոնտրայի ազգասէր ընկերութեան յուղարկած գումարէն պակասն գոնէ 60 թուման իւր սովալուկ զաւակացն շնորհել՝ որ ի պէտու տաճիկ աղքատացն էր յուղարկուած. Գեր. Հիւպատոսն կատարելով Սըրազան եպիսկոպոսի խընդիրն՝ 60 թուման կյուղարկէ Մարտիրայ նորին Սըրազոս Թեան զիտակցութեամբ առ Եւրոպացի վաճառական ոմն տեղւոյն մասնազրել թշուառացն գործակցութեամբ Ասլան Եաւարէ:

### “Ա Պ Պ Ա Ր Շ Ե Հ Ե Ա Ն Գ” Հ Պ Ա Ր Ե Հ Ե Ա Ն Գ

Քանզի բնական է երախտապարս սրտի իւր շնորհակալիքն թէ գրաւորապէս և թէ բերանացի զինցիկ զգացմամբ ցուցանել իւր երախտառորին վասն որոյ և մասնաժողով հոգատարութեան աղքատաց տեղւոյս քաղցը և նուիրական պարտ յանձին զգացեալ՝ ներքին հարկադրութեամբ և ստիպմամբ՝ փութայ իւր սրտից խորոց անկեղծ շնորհակալիքն զրաւորապէս հանել յասպարէզ տեղեկութեան իւր Ծուշուայ գաւառական, նուիսուաբնակ և Ելիսաւետապալցի համազին աղզասէր և բարեպաշտ ազգայնոց, յայտնելով միանդամայն յարգանքը սրտի նոցա սողորմութեան զրամոց ապահովապէս ընդունելութեան յօգուտ Պաւրէժապնակ աղքատաց, ի գաւառացն Ծուշուայ հարիւր քաւասուն և չորս ուուրի, նուիսուայ 39 ուուրի, իսկ յԵլիսաւետապօլցւոց 9 մանէթ և չորս կոպէկ:

Կից ընդ շնորհակալութեան ցանկալի է ինձ և միանգամայն պարտ արժանաւոր գովիլ այն աղզասէր և աղքատասէր եռանդին բոցը՝ որ մտաւորական աշաց հեռատեսութենէն բորբոքեցաւ աղբատէր սրտից հնոցին մեջ, դրամական օժանդակութեամբ օգնել կարեկցական վիճակի թը-

շուառ աղքատացն Դաւրիժոյ, թէ տեղական և  
թէ եկացն զաղմելոց յԱսպահանայ վիճակաց,  
զոր ասպնջականնել խնդրեմ յազգաշահ էջ պատ-  
ռական Արարատիդ:

Է ՊԵՀԱԿ ԽԱՆԱՌԵՒՈՂՅՈՒ

ԼԱՐԱՊԵՎ ԸՆԴԸՆԿԱՆ

Ի 4 Հ-Ա-Լ-Ե-Ն-Ե 1872 թ.,

Ի Դ-Ա-Ր-Ե-Հ.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Համարեա ամենքին յայտնի է, թէ մեր մէջ  
ամենայն տեսակ սկզբնական դասադրերի կողմէց  
ի՞նչպէս մէծ կարօտութիւն, կամ լաւ է ասել՝  
սովոր կայ. որբան հազարաւոր երեխաններ խմում  
են այդ դառն բաժակը՝ այս ու այն առարկայի  
համար, բազմից ամենակ դասեր արտադրելով  
անթիւ սիստեմներով լի, և իրանց թանկազին ժա-  
մանակը մեքենական աշխատութեան մէջ փշա-  
ցնելով, ու վերջապէս, քանի քանի ուսուցիչ-  
ներ վհատվում, յուսահատում են իրանց ծա-  
նըր պաշտոնը բարեխնդութեամբ կատարելու  
համար անհրաժեշտ հարկաւոր միջոցները չու-  
նենալով։ Վարժապետները ստիպուած ու պար-  
տաւոր են երեխաններին ուսում տալու, լուսա-  
ւորելու, կատարեալ մարդիք շնորհու, բայց ի՞նչ-  
պէս, ի՞նչ միջոցներով — այդ հարցնող չկայ.  
Երեխաններին էլ իրանց կողմից պէտք է զիշերը  
ցերեկ անեն, լուսաւորութիւն ստանան, բայց  
ի՞նչպէս, ի՞նչ միջոցներով. — դարձեալ հարցնող  
չկայ։

Եյս զրութեան մէջ ինքն իրան հասկաց-  
վում է, որ մեր մանկավարժական գրականու-  
թեան մէջ իւրաքանչիւր մի նոր երեսյթ ունի  
խորին խորհուրդը ու այդպիսիները՝ նոր սերնդի  
տարրական լուսաւորութեան հիմքերը լինելով՝  
պէտք է հիմնաւորապէս փորձուեն արդար քնն-  
նութեան բովքում։ Եյդ տեսակ երեսյթների  
մասին հարևանցի քննութիւնները բնծայու-  
թիւնները (ռեկոմենդացիա) և ակնարկութիւնները  
եղած թէ չնղած — մի և նոյն են։

“Սշակ” լրագրի Յ Խ ում Պ. Ս. Պ. տպել էր  
մի յօդուած՝ Պ. Պ. Ն. Տէր — Յակովեանցի  
և Ն. Տէր — Ն. Կոնդեանցի “Սպրենի լեզու”,  
զրբոյների մասին, որն որ, պիտի ուղիղն ասել,  
ոչ հիմնաւոր քննութիւն, այլ լոկ մատնացու-  
ցութիւն է միայն։ Գիտելով՝ որ այսպիսի աշխա-  
տութիւնները ոչ թէ մի ժանիսի, այլ շատերի  
քննութեանը կարօտ են՝ աւելորդ չնք համա-  
րում մի քանի խօսք էլ մեր կողմից ասել Պ.  
Տէր — Ն. Կոնդեանցի զրբոյնի մասին, թողելով

Տէր — Յակովեանցինը, որը առհասարակ շատ  
քիչ նշանակութիւն ունի գալոցների համար։  
Բայց ամենից առաջ գեռ մի քանի խօսք։ ~~X~~

Մկղբնական դասադրքի, որպէս և ամենայն բա-  
նի հիմքի կամ սկզբնաւորութեան մէջ շատ մէծ  
խորհուրդ ունի մէկ աննշան պակասութիւնն էլ.  
այս տեղ գործը հում խելքերի — 6—10 տա-  
րեկան երեխանների հետ է, որոնք անընդունակ են  
սեղ տեսնելով՝ սպիտակը ուսանիլ կամ սիալը  
լսելով՝ ուղիղը սովորել։ Նրանք խիստ հաւատա-  
րիմ են իրանց տեսած ու լսածը առանց քննու-  
թեան նշյութեամբ սեպհականացնելու, կարծ  
ասենք՝ նրանք չեն կարող ուրիշ բան դնեն։  
— լուրջ բան հասկանաւ (օբյեկտիվություն)։ Դի-  
ցուք թէ դասադրքի ընթացքում կան մի քանի  
տառ տառասիսալներ, կամ գործածուած են  
խորին և անուղիղ ոճեր, կամ յայտնուած են  
մի քանի սիսալ հասկացողութիւններ, դասի ժա-  
մանակի ի՞նչպէս անսես, ի՞նչպէս հասկացնես երե-  
խային, որ այս ինչ պիտի այսպէս չը լիներ, այլ  
ուրիշ կերպ, կը հասկանա՞յ և կ'սեպհականացնէ։  
Նա այդ ասածը, երբ աչքի առաջի տեսնումէ ու-  
րիշ կերպ զրած։ շատ զժուար։ Որբան անհա-  
մար վատ չետևալներ են առաջանում, երբ ու-  
սուցիչը փոխանակ դասադրքի միջնորդութեամբ  
երեխային զարգացնելով՝ սկսումէ նորա առաջին  
ամենայն օր այդ դասադրքի վերայ քննութիւն  
անել՝ նորա թերութիւնները ցցց տալով։ Եւ  
այս ոչ մի քանի, այլ հազարաւոր երեխանների  
համար է. բաց ի նրանից՝ միթէ դասադրքի բոլոր  
գործածուներին հեջան է նորա պակասութիւննե-  
րը նկատել, ու մեր ուսուցիչների և ծնողների  
(որոնք գուցէ կ'կամենան իրանք ուսուցանել դրել  
և կարգալը) մէջ չկա՞ն շատերը դրբի լաւ ու  
վատը միմեանցից չ'որոշող։ ի հարկէ կան, նւ-  
րեմն այստեղ հարկաւոր ենք համարում ինդրել  
մեր ընթերցողին՝ չըձանձրանալ մինչև վիրջը կար-  
դալու մեր նկատողութիւնները թէ որ նրանք փո-  
քը ինչ մանրակրկիտ երեւալու լինին, իմանա-  
լով՝ որ սրանք ունին իրանց խորհուրդը սկզբնա-  
կան դասադրքի մէջ։

Ա.

Եթէ սկզբնական կրթութիւնը պարտաւոր է  
երեխանների գլուխիասիրական զգացումն էլ միւս-  
ների հետ միասին զարգացնել, ուրիշն և աւե-  
լորդ չէ նկատել, որ Մայրենի լեզուն, թղթի և  
զրբի կողմից զեղեցկութիւն չունի. թերթերի ծա-  
լուածքը խիստ տգեղ է — մէկը շատ աւելորդ  
միւրը շատ պակաս, որը, ի հարկէ, տպարանի մե-  
ղնն է. Գրքայները երեխաններին բաժանելիս՝ իւ-  
րագանցիւր նրանցից տհաճութիւնն է յայտ-  
նում, որ իրան զրբի թերթերը մեծապատիկ են,  
ու խնդրումէ յետ առնել և տեղը ուրիշը տալ,